

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ՝ 18-ՐԴ ԴԱՐԻ ՏՐՈՒԲԱԴՈՒՐ

Անգլիացի գիտնական, հայագետ, գրաբարի մասնագետ Չարլզ Դաուսեթն այսպես է վերնագրել Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին ձոնված այս աշխատանքը: 12 գլխից բաղկացած գիրքը հրատարակվել է Բելգիայում, (Լուվեն, 1997թ.): «Բանաստեղծի կյանքը և փաստեր» ենթավերնագիրը ներառում է գուսանի կենսագրական մանրամասները¹:

"Swan-Songs" - «Կարապի երգեր» V գլխում (էջ 131-200) Դաուսեթն անդրադառնում է վրաց արքունիքում Սայաթ-Նովային շրջապատող իրականությանը. Նախանձը սարդոստայնի մման ցանց էր հյուսում գուսանի շուրջը, սակայն պալատական երգչի ծայնը ճեղքելով երկինքը, ճայթում է շանթ ու որոտի պես և ցույց տալիս, թե ով է ինքը.

Անունս Արութին, ես Սայաթ-Նովա,

Էնպես խոսք կասեմ, որ երկինքը գոռա: (Թ.Գ.Մ.)

Նա գիտեր իր արժեքը, խաղերի թափը:

Ամեն մարթ չի կանա խըմի՝ իմ ջուրըն ուրիշ ջըրեն է

Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գըրեն է:

Այլ էր Սայաթ-Նովայի իրական աշխարհը: Այսպես Քրիստոսն էր ասում Պիղատոսին. «Իմ թագավորությունն այս աշխարհում չէ» (Ղովհ. 18,36) (էջ 133): Ապա Դաուսեթը նշում է, որ նույն ձևով Չաֆիզն էր երգում 14-րդ դարում.

Չաֆիզ, քո քնարից չքնաղը չկա,

Ծոցումդ պահած Դուրանը վկա: (էջ 133):

Ավելի աշխարհիկ բնույթով, 12-րդ դարում տրուբադուր Բերնարդ դե Վենթադորն էր գովերգում իր գերազանցությունը: Նման բանաստեղծներն, անշուշտ, կունենային թշնամիներ: Իսկ Սայաթ-Նովան իր տաղանդով և

¹ Charles Dowsett, "Sayat-Nova An 18th-century troubadour", The Poet's Life: The Facts, Louvain, 1997, pp1-45.

շրջապատի անարդարության հանդեպ անաչառ քննադատությամբ, այդպիսի բանաստեղծ էր:

Աքսորից տակավին 6 տարի առաջ Սայաթ-Նովան թախանձագին խնդրում է վրաց թագավոր Չերակլ Երկրորդին.

Դու ե՛մ գլխեն իմաստուն իս, խիլքտ հիմարին բար մ'ի անի.

"Keep your heart pure: a stranger's word not to be believed." (էջ 138):

Այնուամենայնիվ, կանխազգալով ինչ-որ վտանգ, գրում է .

Թե էսանց էլ սուչ ունենամ գլուխս արա տալ, թաքավոր:

Սըտիկ արա քո Ստեղծողին՝ նահախ տիղ դազար մի՛ անի:

"If I have committed an offence, have me beheaded, O King!

Remember your Creator, do not wrong me unjustly, O King" (էջ 138):

Եւ գրում է մոտալուտ պատիժը.

Do not make Sayat-Nova's grave in India, Abyssinia or Arabia! (էջ 184):

Սայաթ-Նովու գերեզմանըն Դինդ, Դարաշ, արաք մի՛ անի:

Թեև բանաստեղծի պալատից հեռացումը թվագրվում է 1759թ, բայց 1758թ. գործերում արդեն նկատվում է մտավոր լարում, կաշկանդվածություն: Նման հոգեվիճակի ուսումնասիրության համար, Դաուսեթը դիտարկել է այդ շրջանում գրած 12 հայերեն և 4 թուրքերեն խաղեր: Ոչ մի վրացերեն գործ այդ շրջանում թվագրված չէ: Դա Սայաթ-Նովայի ստեղծագործությունների ամենաբեղուն շրջանն է: 1758-59 թթ. խաղերը Դաուսեթը անվանել է «Կարապի երգեր»... Աստվածային կրակի վերջին բոցկլտում, երգի պոռթկում և լռություն... 1758թ. հայերեն խաղերը անկեղծ սիրո տվայտանքներ են: Հայագետը մանրագին քննարկում է բոլոր հայերեն և թուրքերեն խաղերը, փորձելով գտնել կենսագրական տեղեկություններ, ապա անգլերեն տառադարձմամբ գրում է և հայերեն, և թուրքերեն բանաստեղծությունները, թարգմանում անգլերեն՝ նախ տողացի, ապա՝ ըստ հանգ ու վանկի: Անկրկնելի է Դաուսեթի թարգմանական վարպետությունը: Հայերենի ամենաբարդ և նրբին ընկալումներն ապշեցնում են: 1758թ. խաղերում շարունակ հնչում է «էշխեմետ հիվանդացիլ իմ», սիրո և խանդի տառապանքը՝ հոգեկան տվայտանքների աչքի զարնող փոխաբերություններով լի:

էշխեմետ հիվանդացիլ իմ, դիդի համա իմ լալի.

.....

Տանեն դուս արածի մըման տիդի համա իմ լալի:

(Ս. 7., էջ 52):

"I am grown sick for Love of you, I cry for a remedy" (էջ 158):

«Ինչի» համար է լալիս» բանաստեղծը, խորհում է Դաուսեթը, ապա ավելացնում, որ Սայաթ-Նովա կարդալիս, պետք է զգուշանալ, ինչպես Մուլիեր կարդալիս: Սակայն, բացահայտ է, որ կան լուրջ պատճառներ: Եվ, իրոք, մի քանի ամիս անց, «տանեն դուս արածի » նման լքված, վտարված՝ տեղ է որոնում Կասպիականի ափերում:

Տիս, թե ինչպես է շըփոթվի, դուն իմ խիլքին մըտիկ արա:

Ջուրն էկավ, գերանըս տարավ, ծիդի համա իմ լալի: (էջ 52):

Ինչ՝ է սա, խորհում է Դաուսեթը, պարողի՞ա՝ համահունչ Սապֆոյի բանաստեղծության, երբ բառերն ի զորու չեն արտաբերվել, պապանձվել է լեզուն:

Սայաթ-Նովայի փոքրիկ մավը Շեքսպիրի մավակի պես օրորվում է սիրուհու անեզր սիրո օվկիանոսում: Բանաստեղծը թափառում է մուլոր, սիրտը վառված.

Սիրտըս լուրի պես խորվեցիր էշխիտ կրակով, ա՛ջքի լուս,

Աշխարս աշխարով կըշտացավ, յիս քիզանից սով, ա՛ջքի լուս: (էջ 46):

Լոկ լուռ տառապանք: Խորն է Սայաթ-Նովայի վիշտը, դա ոչ Սապֆոյի պարողիան է, ոչ Մուլիերի կատակերգությունը, եզրահանգում է Դաուսեթը:

1758թ. հունիսին կատարված «Էնդուր աչկըս չի ցամաքում, սըրտիս մեչըն արին մընաց» երգի հենց առաջին տողում ցավագին ողբ կա: Երկնային և երկրային գեղեցկության ինքնատիպ գովերգումը Սայաթ-Նովայի աստվածային խաղն է, Երգ-Երգոցը: Նույնքան և փառահեղ է Դաուսեթի անգլերեն թարգմանությունը: «Անգին ակըն վըրետ շարած» բանաստեղծությունը Դաուսեթի մեկնաբանմամբ հնչում է որպես սիրո ռեքվիեմ: Երկինքը ծյուն է դրել սիրուհու վրա: Նորից երկինաստ տողեր: Դա սիրո վրա ծյունած վաղանցիկ մորմո՞քն է, բաժանու՞մն առհավետ, թե տարիներ՞ն են ծյունել սփռուհու մագերին: Ապա՝ խոր, վշտալից աղաչանքն առ Աստված.

Թաք յիս միոնիմ, դուն սաղ ըլիս, գերեզմանըս վաղ տիս, գո՛գալ:

(Մ 7., էջ 50):

«Արի համով դուլուդ արա» խաղը բացարձակ մարտահրավեր է թշնամիներին: Նա հրապարակավ երգում է.

Ավիտարանի խոսկիրըն մարքարիտ է, կարքըն սիրուն.

Մի՛ ածի խուզի առչիվըն լալ ու գովիար, Սայաթ-Նովա: (էջ 53):

Այդ շրջանի թուրքերեն խաղերը նույնպես մանրամասնորեն դիտարկվում և թարգմանվում են անգլերեն: Հիմնականում նրանք բարոյա-խրատական են՝ օգուօլամա կամ խոհա-փիլիսոփայական թեքնիս.

Անդում, անհիրթ մե հուջրա է միր հոքին...

Տերն ըստեղծից արար աշխարհ, կինք ու մահ...

Սախս իրա վուտով գու քա, յիս տիղիս իմ ման գալի...

Let Death tread underfoot, I appeal to my place.... (էջ 189):

Այս մարմնավորված պատկերը Ղաուսեթին հիշեցնում է Հորացիուսի տողերը՝
Pallida Mors acquo pulsat pede pauperum tabernas regumque turris
(*Odes, Liv, 11, Ch.D, p. 118*).

Death kicks with his indifferent foot at (the doors of) pauper'hovels

And the castles of kings....

(*Ch.D, p. 118*).

«Դժգույն մահը ոտքով հարվածում է թե՛ աղքատի, թե՛ արքայական դռները...» *

Սայաթ-Նովայի ամենաինքնատիպ երգերից է «Խաղ Զորս Լեզվով» բանաստեղծությունը, գրված «օգուօլամա-յաբանա»-խրատական ոճով: Ղաուսեթը շեշտում է , որ համաշխարհային պոեզիայում առաջին-անգամ է հանդիպում նման ոճի բանաստեղծության: Խաղն ինքնակենսագրական է, թախիծով պարուրված: Ղաուսեթը խորհում է, թե Սայաթ-Նովան խոսքն ուղղել է Հերակլ երկրորդին՝ ի լուր իր տառապանքների, նաև քաղաքակիրթ աշխարհին: Գուցե ընդգծել է մշակույթներն իրար կամրջող Վարպետի իր դերը: Ղաուսեթը նմանատիպ պարոդիայով խաղ է գրել գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով, իրեն ներկայացնելով որպես անգլիացի գուսան Հերակլի և Եկատերինա Մեծի պալատում:

Իսկ ի՞նչ եղավ բանաստեղծի հետ մեկ տարի անց: Այդ մասին Դաուսեթը հանգամանորեն խոսում է «Վտարում և աքսոր» - "Dismissal and Exile" գլխում (էջ 200-233), համեմատելով Սայաթ-Նովային Օգոստոս կայսեր սիրելի բանաստեղծ Օվիդիուսի հետ: Այս գլխում Դաուսեթը հատուկ ուշադրություն է դարձնում Սայաթ-Նովայի 1759 վեց հայերեն խաղերի վրա: Չմանրամասնելով հետաքրքիր վերծանումներն և մեկնաբանությունները, ամփոփենք Սայաթ-Նովայի խոսքերով. «Թամամ աշխարհի պըտուտ էկա : Աշխարըս միզ մնալու չէ՝ մալ անիլն ինչին է շահ»: Եվ թափառում են մարդկության աշուղներն ու դառնորեն երգում նախասահմանված ճակատագրի ողբը: «Սոճու անտառով անցնելիս, չորացած ծառերը հիշեցնում էին ընտանիքս ու ինձ», գրում է Բայրոնը հայրենիքից ցավով հեռացած: Ձարմանալի նմանությունը, ինչպես Դաուսեթն է ընդգծում, կարծես, անգլոհայկական կապի հավաստումն է: Մեծ բանաստեղծների միջև ձգվող զուգահեռը, արվեստի հաղթության առհավատչյան է: Դաժան է ճակատագրի հալածանքը: Մեկը երբեք չի վերադառնում Լոնդոն, մյուսը՝ Թիֆլիս... Դաուսեթը հավասարապես մխրճվել է համաշխարհային մշակույթի ընդերքը, մշակույթ՝ կերտված մարդկային հանճարով, հանճարներ՝ դատապարտված մարդկային ոճիրներով: Եզրահանգումը նույնն է՝ արվեստն անմահ է, ժամանակի և տարածության սահմաններից դուրս:

Ըստ Դաուսեթի, Սայաթ-Նովան Կանգնած է Գրիգոր Նարեկացու և Նահապետ Քուչակի բարձրությանը՝ հավասար: Հավասարաբժեք են Սայաթ-Նովայի երգերն ու բանաստեղծությունները: Նրա քնարը հմայում է երկու դար շարունակ: Գրում է երեք լեզվով՝ հայերեն, վրացերեն, թուրքերեն: Հայերենը թիֆլիսահայության բարբառն է: Անհրաժեշտ է արդյոք, որ բանաստեղծության բառերը լրիվ հասկացվեն կամ, առհասարակ, միտքն ամբողջովին ընկալվի: Ըստ որոշ գիտնականների, եթե Հոմերոսը լրիվ ըմբռնվեր, ապա նրա բանաստեղծական խոսքիմաստից գլխապտույտ հարված կստանային (Ch.D., p.235): Չափածոյի մոտավոր իմաստը կարող է հասկացվել բանաստեղծության երաժշտական հնչեղությամբ, այն պետք է լինի մեղեդային, ինչպես Թենեիսընի "murmuring of innumerable bees" -

«մեղուների բզզոցը բազում»: Բանաստեղծության միտքն ու հնչյունը պետք է ծուլվեն, իմաստն ու մեղեդայնությունը պսակվեն: Լավ բանաստեղծը պետք է հասնի այդ կատարելությանը: Սայաթ-Նովան նրանցից մեկն է: Նա ունի «վճիտ ծայն» կոչվածի զգացողությունը, երբ հնչյունը զգացմունքի ամբողջական արտահայտությունն է:

Իսկ ինչպե՞ս է դա արտահայտված Սայաթ-Նովայի բանաստեղծություններում.

Պատկիրքըտ դալանով քաշած, թահիրըտ ձանգե ռանգ իս անում.

Էրեսիտ խալըն ծածկում է՝ մազիրտ խափանգ իս անում.

Բացվիլ իս կարմիր վարթի պես, բըլբուլի հիդ հանգ իս անում...

(Մ. 7., էջ 7):

Մի տողում հաճախ հանդիպում է տաս ս: 15 ոտնաչափ տողերում նույնպես հնչում է ս ծայնավորը: Իհարկե, միշտ չէ, որ հայերեն բոլոր ծայնավոր հնչյուններն ունեն ծայնային ներգործություն: «Ակռեքըտ օսկումըն շարած, պըռռչտ մահանգ իս անում». այս պատկերը տեսողական է, թեև չի բացառվում, որ քամանչան ծայնային կարողությամբ, տարբերակային հնարավորությամբ վերադարձնի այս պատկերը: Ապշեցուցիչ բան է, թե ինչպես է Սայաթ-Նովան տեսողա-լսողական պատկեր հարաբերությունը նույնացրել և նույնքան զարմանալի է, որ այդ երևույթը աննկատ չի մնացել Դաուսեթի կողմից: Հետևյալ տողերում շարժումը լսելի է դառնում բաղաձայնության միջոցով.

Յիփ մըտնում իս մեջլիսումըն, շանգ-շուխի-շաքանգ իս անում,

Յիփ տեղենտ ժած իս գալիս, շոխշոխում հս օրոցհոհ պես՝

Ի՞նչ կոնիմ սանթուր քամանչեն՝ զուգսըտ չոնզուտ, չանգ իս անում:

(Մ. 7., էջ 7):

Ափսոս անգլերենն ի գորու չէ արտաբերել հայերեն բաղաձայնությոն և բնամանությունը համազոր արժեքով:

Անկրկնելի է Սայաթ-Նովայի վարպետությունը, շեշտում է Դաուսեթը: Նա նվագում էր երեք գործիք, Սայաթ-Նովայի սիրելի գործիքը քամանչան էր. «Ամեն սագի մեջըն գոված դուն թամամ տասն իս, քամանչա»: Խաղը գրվել է 1759 թ., երբ, ավաղ, նա արդեն հեռու էր երաժշտական

աշխարհից: Եվ սակայն, նույնիսկ աքսորում, սիրելի քանանչան Սայաթ-Նովայի կյանքում միակ մխիթարությունն էր:

Հարազատ մնալով 20-րդ դարավերջի նշանավոր անգլիացի հայագետի մեկնաբանություններին՝ ներկայացրեցինք նրա կոթողային հետազոտությունից մի փոքրիկ հատված, որում Սայաթ-Նովայի բանաստեղծական աշխարհը զուգահեռվում է աշխարհի հանճարեղ բանաստեղծների՝ Յոմերոսի, Շեքսպիրի, Բայրոնի հուզաշխարհի հետ: Նման մեկնաբանությունը լրիվ նորություն է բազմապիսի հետազոտություններով հարուստ սայաթնովագիտության մեջ: